

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ԳՐԱԽՕ և ՄՀԵՐ». Ժողովրդական դիւցազնական վէպ. գրի առաւ Մ. ԱՖԵՂԵԱՆ. Շուշի, Միրզաշան Մահտեսի-Յակովբեանցի տպ. 1889 թ., Ժ-51 էր. փոքր քառածալ, տառ № 12, գինն է 35 կ.:

Այս գիրքը բաղկացած է մի լաւաջաբանից և երեք հատածներից՝ Դաւիթ 37 երես, Մհեր 11 երես և Թուրան Դաւիթ 2 երես: Առաջին երկու հատածները վարիանտներ են հ. Սրուանձտեանցի «Գրոց-Բրոց» գրքում բերած «Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ»¹⁾ լատնի ժողովրդական դիւցազնական վէպի, իսկ վերջինը մի բոլորովին նոր կտոր է:

Պ. Մ. Աբեղեանը պատահամբ լսել է էջմիածնում մի մոկացուց արդ վէպը և գրի է առել, այնատեւով տողերի բաժանել և ոտանաւորի ձևով հրատարակել: «Այդ տողատու թիւնը տեղ կաջ շատ չաջող է, տեղ կաջ թող է. թուրուքիւնը լաւաջացած պիտի լինի անշուշտ նորանից, որ պատմողը՝ ոտանաւորը մոռացած լինելով խառնել է»: Դորան էլ եթէ աւելացնենք, որ պ. Աբեղեանը դժաւրացել է ճշտութեամբ արտապատել

մոկացու հնչիւնների բարբառաւոր առողանութիւնը իւր սուղ և երկար ձայնաւորներով՝ հասկանալի կը լինի թէ ինչո՞ւ արդ տողատեւը տեղ տեղ անկաջող է: Օրինակ, այս կտորում չափ չի նկատուում.

Կնիկ խարցրեց, ասաց.

—Մարամելիք, տիւ ինչո՞ւ էսօր
չես խօսալ:

Ասաց—Յիշ էր խօսամ.

Քեռ տղէն ձի շատ ամօթով էրաւ
մընչ խալխին:

Կնիկ ասաց.—Յիշ էրաւ.—

—Ես իմ գեորդ որ, չարղեցի (չէեցէ)
Չեռ ետուր, զիմ գեորդ բռնեց:

—Բան չը կալ, տղալ է, ասաց,
խելք բան չը կարի. և արշ:

Սակայն որ վէպի սկզբնական աղբիւրը ամբողջապէս չափ ունի՝ արդ ակնկալտնի է, օրինակ, ոչ միայն էպօսի մէջ պատահող երգերից, այլ և հետևեալ կտորներից.

Բերենք, մէկ սէնի ոսկի դնենք էռջև,
Մէկ սէնի լէ կրակ դնենք էռջև...

¹⁾ Թարգմանւած է ռուսերէն պ. Գ. Խալաթեանից:

Մէկ սէնի կրակ, մէկ սէնի ոսկի,
Բերին զրին չէջև Դաւթին.

Կըկեալ, Սասմալ քաղաք աւրի,
Մարալ քաղաքի քամակ նոր քաղաք

Մարալ քաղաքի քամակ նոր քաղաք
Րմ շինի.

Ասաց, ժողովեց, զըմեն թօի էրաւ,
Ասքեար կապեց, էկաւ վար Սաս

Մընչ դաշտին զիւր չաղը՝—խեաթ
(Վրանէր) եղար,

Ձուհապ խրկեց Ձէնով—Յովանին
կամ՝

Չուր խլիսուն, քանի մ'աստղ եր-

Ընցկուն չաղը՝—խեաթ բուլուր
քեո քաղաքին զարենն

Յըմեն քեո խօր գլխու դուշման էլ
ենն...

Չուր խլիսուն, քանի մ'աստղ եր-

Ընցկուն չաղը՝—խեաթ բունեցին
Բուլուր Խանդութ խաթնի խօր

Յըմեն Խանդութ խաթնի խօր
դուշման. և ալլն.

Պ. Արեղեանցի բերած վարիանտը
աւելի ընդարձակ և մօտ լինելով
սկզբնականին քան Սրուանձտեանի-
նը, աւելի լոյս է սփռում մեր ժողո-
վրդական բանաւոր ստեղծագործու-
թեան գեղարւեստական կողմի վե-
րալ. ժողովրդի սիրած հերոսը՝ «սի-
րուն—խօրօտ», «թուխ—մօրուտ» թը-
լօր Դաւիթը՝ ընկիէֆ կերպով է
հանդիսանում մեր առջև, հեծած իւր
«Բուլուկիլ—Ջալալին», կապած «քա-
մարն ի մէջքին», թուր—կէծակին»

դրած «գլխու գետին», հաղած «կա-
պէն—խաբուկին», «վար աջ թևին
ունենալով «վաչ—պատարազին»։ Նա
կուռւմ է իւր հալընի քաղաքի հա-
մար Մարամելքի, փէշլիւանների
և իւր սիրունու՝ Խանդութ խաթնի՝
հօր թշնամիների դէմ։ Սասնոյ ժո-
ղովուրդը իւր հերոսին ներկայաց-
նում է բարի, պարզ, միամիտ, ուխ-
տապահ, ողջախոհ, քաջ, գերբնա-
կան ուժ ունեցող և վնահանձն, ժողո-
վրդի պաշտած Դաւիթը չի ուղում
թշնամու վերաջ ծածուկ չարձակել.

—Ի՞նչխ անեմ, թը գեաղտիկ էր-

Թամ,
Տ'ասեն Դաւիթ գեող էկաւ, գեող

Գնաց...
Եւ դիմելով թշնամիների բանա-

կը կանչեց.—
Վով քներ էք՝ չարթուն կացէք.

Վով չարթուն էք՝ ելէք, կալնեցէք.
Վով կալներ էք՝ ձի (ջեթ) ճակեր

(դրանէր) կապեցէք,
Վով ձի ճակեր կապեր էք՝ ձի ձի-

անք թամբեցէք.
Վով ձի ձիանք թամբեր էք՝ ելէք,

խեծեցէք,
Չ'ասէք՝ Դաւիթ գեող էկաւ, գեող

Գնաց:
Ահա ինչ բանաստեղծական հա-

մեմատութիւններ է անում ժողովուր-

դը. Մարամելքը խաբելով միամիտ
Դաւիթին ձգում է հորը։ Սասնոյ մէջ

ալդ ժամանակ նորա հօրեղբայր՝
Ձէնով—Յովան գշեր էրազ տեսաւ,

Մարալ աստղ պալծաւ էր,
Սասմալ աստղ մօղաւիր (Մեռնու) էր:

Քնուց էլաւ վիր, ասաց.—
Կնիկ, իրի վիր. ես տեսալ

Մարալ աստղ պալծաւ էր,

Սասմալ աստղ մօղաւիւր էր,—
 Դաւիթ ձեռաց դնաց,
 Ձէնով—Յովան էլ ըմ քնաւ,
 Դոր էրազ տեսաւ՝
 Մարալ աստղ էկաւ,
 Սասմալ աստղ ետու կուլ և ալլն:
 Կամ՝ Դաւիթ տեսնելով թշնամիներ
 անթիւ վրանները՝ ահա ինչ է ասում.
 «Էնոնք էլենն բամբակ,
 Ես լէ էլենմ կրակ,
 Ձեմ կարալ էրեցըցի.
 Էնոնք էլենն գարնան մատղաշ
 գառներ,
 Ես լէ էլենմ գարնան մատղաշ գէ-
 լեր,
 Ձեմ կարալ զանոնք կտրեցըցի»:
 Ահա և բիրտ սասունցու պարզ,
 Ինքնուրոյն նկարագրութիւնը երկու
 սիրահարների քնքշութիւններին.
 Դաւիթ զիւր ձին խեծաւ,
 Քշեց, գնաց լեռջև Խանդուլ խաթ-
 նի փանջարին,
 Խանդուլ խաթուն՝ որ աչք ընկաւ,
 ՁԴաւիթ տեսաւ՝ ուրախացաւ.
 Ուրախութենէ խնձոր մ'եղար Դաւ-
 թին,
 Դաւիթ զխնձոր բռնեց վար ձիուն.
 Խնդացաւ վար խնձորին.
 Դաւիթ գշեր էլաւ, գնաց Խանդուլ
 խաթնի տուն,
 Էնոր կշտին պառկաւ չուր խլիսուն:
 Խլիսուն էլաւ վիւր տ'երթէր, լուաց-
 ուէր.
 Խանդուլ խաթուն ձիւր տարաւ,
 Ըլից Դաւիթ ձեռաց.
 Դաւիթ գրկեց զԽանդուլ խաթուն՝
 տը պագնէր,
 Խանդուն խաթուն չեթող պագնէր:

Բռնցքի մ'եղար Դաւիթ բերան
 Արուն—արնձիւր բերնէն եթաւ տիւս:
 Վէպում նկարագրած Մհերի բո-
 լոր կեանքը ցոյց է տալիս թէ ժո-
 ղովուրդը որքան մահացու մեղք է
 համարում ծնողներին անպատելը.
 —Մհեր, որ տիւ խեղ ձի կռիւ ա-
 բիւր,
 Ձի ամանչըցրիւր մընչ խալխին,
 Կանչիր եմ քաղցրիկ Ասուած,
 Քեո մօտէն ժառանգ չընկնի տիւրս,
 Քե մախ չըլնի, չուր Քրիստոս
 կեալ զատաստան:
 Ահա թէ ինչպէս է անիծում Դաւի-
 թը իւր որդուն Նորա իւր գէմ ձեռք
 բարձրացնելու համար:
 Դաւիթ մահից լեռոյ՝
 Մհեր մնաց հեթըմ:
 Ձէնով—Յովան զՄհեր տիեց,
 Էլ չը պախեց, ասաց.
 —Մհեր, կոնդ ես,
 Խեղ քեո խէր կռիւ արիւր,
 Իլի՛, գնա միր քաղքէն,
 Մը դադրի մեր քաղաք:
 Մհեր էլաւ, գնաց,
 Վար խոր գերեզմին կաջաւ
 Ելաց, ասաց.
 «Խէրի՛կ, վի՛նչիւ անեմ,
 Խէրի՛կ, վի՛նչիւ անեմ,
 Ասօր ձի Սասմալ քաղքէն
 Բեհբա՛ր («բոբ») ի խանած»:
 Գերեզմնից ձէն էլաւ, ասաց.
 «Որդի՛, վի՛նչիւ անեմ,
 Գացիր մէջալն ի ձեռնէս,
 Գացիր մէջալն ի ձեռնէս,
 Թափիր մաղկուն երեսէս:
 Գնա Հալաբալ քաղաք» ի ալլն:
 Ո՛րքան վիշտ, թախիծ ալդ մի
 քանի տողերի մէջ:
 Եւ անիծած անժառանգ ու ան-

մահ Մհերը, որի պէռջն գետին թու-
լացիր էր, խող չէր դադրի վեռնէ,
վերջը զղւած կեանքից աղօթք է ա-
նում:

«Ով Տէր Ասուած,
իմ խօր անէծք ձի խասիր ի,
իմ միջաց էրակ քաշիր ի,
իմ մօտէն ժառանգ չ'ընկաւ մըշ
աշխարքին.

Ձի էլ մախ չը կալ, չուր Քրիստոս
կեալ դատաստան.

Ո'վ Տէր Ասուած, դքեղ եմ կանչիր.
Տիւ ընցկուեմ քնես, ձի ձգես վա-
նալ քար,

Չուր Քրիստոս կեալ դատաստան.
իմ խողու ճարը էնիո:

Ասուած հրամանք էրաւ,
Ձէնիկ մարմնաւոր եթալ վանալ
քար,

Չուր Քրիստոս կեալ դատաստան.

Այս մի քանի նմուշները բաւա-
կան են՝ ցոյց տալու համար որքան
հրաշալի պէտք է լինի սասունցիներ-
ի էպօսի սկզբնատիպը իւր ամբող-
ջութեամբ: Այդ էպօսը պարունա-
կում է Սասնոյ տէրերի ցեղի չափա-
մութիւնը, սկսած Աբամելիք Սանա-
սարի ժամանակներից, ալիսնքն մի
քանի դար Քրիստոսից առաջ, մինչև
համեմատաբար նորագոյն ժամանակ-
ները: Ի հարկէ, ժողովրդի բերանում
սերունդից սերունդ և դարից դար
անցնելով ալդ էպօսը կրում է փո-
փոխութիւններ և լաւելածներ, մտա-
նում են նորա մէջ զանազան անա-
խըրծիղմներ, բայց պատմական հիմ-
քը ահու ամենալինւ պահպանւում
է, ինչպէս և էպօսի բուն նիւթը, ո-
րը Սասնոյ դիւցազն տէրերի անընդ-
հատ պատերազմներն է նկարագրում

Մարամելքների հետ, ալիսնքն՝ հա-
ւաքական մտքով՝ Սասնոյ զանազան
թշնամիների դէմ: Հ. Գ. Սրուանձտեանի
վարիանտը սկսում է սասունցիների
նախահայր Աբամելիքի և Սանասա-
րի պատմութիւնով և վերջանում է
Աբամելիքի որդի Դաւթով և սորա
որդի Մհերով: Պ. Աբեղեանի վարի-
անտը ուղղակի սկսում է Դաւթից,
Մհերի մասին աւելի երկար է պատ-
մուում և դիւցազներգութեան մի
դեռ անլաւ ձիւղից՝ Թուան Դաւ-
թից՝ մի փոքրիկ կտոր է բերւում:
Իսկ «Թլօր Դաւթի» գլուխը աւնքան
ամփոփ է, որ թողնում է մի վերջաց-
րած և դեղարւեստական կողմից մի-
ապաղաղ տպաւորութիւն:

Մինչև այժմ գրականութեան մէջ
լուս տեսած նմուշները ցոյց են տա-
լիս, որ սասունցիների ալդ հրաշալի
էպօսը բաւական ընդարձակ է: Նթէ
մեր տեղ աւելի կրթւած ազգ լինէր,
տեսնելով իւր ժողովրդական հանճա-
րի ստեղծագործութեան ալպիլիսի
նմուշներ՝ եթէ ոչ մի գիտնական էքս-
պեդիցիալի, գոնեա մի երկու ձեռնհաս
անձանց միջոց կը տար գնալ և տեղն ու
տեղը հաւաքել ու կորստից ազատել
ժողովրդի բանաւոր գրականութեան
ալպիլիսի գանձերը: Բայց մենք՝ հա-
լերս շատ անտարբեր ենք, սեպհա-
կան հանգստութիւնը սիրող և պա-
ռաւած, որ ալպիլիսի գործերի հա-
մար մտածէինք... Նթէ ալդ իրա-
գործէր, ալն ժամանակ մերանդոյն,
թող բանաստեղծները, և առհասա-
րակ ժողովրդական տարրից զուրկ
գրականութիւնը, խմելով ժողովրդա-
կան բանահիւսութեան պարզ, թարմ,
ուժեղացնող և կենդանարար աղբիւ-

րից, ալնպէս կը կերպարանալիս-
ւին, ինչպէս փոխւեց թլօր Դաւի-
թը՝ խմելով իւր հօր «կաթնաղբիւ-
րից»:

Մէկ սհաթ քնաւ, էլաւ
Տեսաւ էնպէսն ի լցւի
էնպէսն ի խաստացի,
էնպէսն ի զօրութիւն, ոգժ առի,
Որ չափաւամիշ ի եղի:

Այսպէս ուրեմն, պ. Աբեղեանի
հրատարակած «Դաւիթ և Մհեր» ժողո-

վերդական դիցազնական վէպը, չը
նալած իւր թերատութեան, մի շատ
նշանաւոր երևոյթ է մեր գրականու-
թեան մէջ և ցանկալի է, որ այսու-
հետև ոչ թէ պատահական կերպով
անլապտութիւնից լոյս աշխարհ ընկ-
նէին մեր ժողովրդի փառաւոր դի-
ցազներգութեան բեկորները, ալ
կազմակերպւած հետազօտութեան և
ուսումնասիրութեան արդիւնք լի-
նէին նոքա:

Լ. Ս.

ՌՈՒՇԱՆ և ՀԻՌԻՋԱՒ, վէպ (Ղարաբաղի անցեալից). հեղինակու-
թիւն ՄԻՐՋԱ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ. տպ. Մ. Մահտեսի-Յակոբեանցի,
Շուշի, 1889 թ., քառածալ, Գ+148 էրես, տառ № 12, գինն է 40 կ.:



Պ. Միրզա Տէր-Սարգսեանցի
վէպը, որպէս հեղինակը մէկ լառա-
ջաբանով լատնում է ընթերցողին,
պատմական վէպ է: Համառօտակի
պատմեմք վէպի բովանդակութիւնը:

Լինում է չի լինում Ղարաբաղում
մէկ Մ. գիւղ. այդ գիւղի մէջ ևս լի-
նում են մէկ երիտասարդ՝ Ռուշան
անունով և մէկ աղջիկ՝ Հիրիդադ
անունով. այդ երկուսը միմեանց սի-
րում են: Ղարաբաղի խաները սո-
վորութիւն են ունեցել տարին մէկ
անգամ հալ գիւղերից գեղեցիկ աղ-
ջիկ ընտրել և բռնութեամբ տանել
իրանց հարեմը: Ղարաբաղի խանը
մարդիկ է ուղարկում Հիրիդադին
հարեմը բերելու. Ռուշանը իւր հա-
մագիւղացի մէկ քանի երիտասարդ-
ներով վարձակւելով Հիրիդադին խա-
նի մօտ տանող թուրքերի վերայ՝ նո-

ցա սպանում են և Հիրիդադին ա-
ղատում: Խանը բարկանում է այդ
դէպքի վերաջ և Մ. գիւղը քարուքանդ
անում, գիւղացիներին քաւականին
մարդիկ սպանում: Վերջ ի վերջոյ Հի-
րիդադը բռնւելով ընկնում է խանի
հարեմը, բայց չը կամենալով մահմե-
դական լինել և խանի կամքը կա-
տարել, մանաւանդ թէ իւր սիրե-
ցեալի երգի ձայնը լսելով, ապարա-
քի բարձրութիւնից իրան ցած է
ձգում Ռուշանի շոտներին տակ ու մեռ-
նում, ուր և Ռուշանն ևս անձնա-
պանութեամբ վերջ է տալիս իւր
կեանքին:

Ինչպէս լատնի է, պատմական
վէպ գրել շատ անգամ չէ լաջողում
նոյն խի տաղանդաւոր վիպասանե-
րին, որովհետև այդ տեղ, բացի տա-
ղանդից, վիպասանը պէտք է ուսում-